Հավելված 4
«Հայփոստ» ՓԲԸ գնումների
գործընթացի իրականացման կարգի

# ՀՐԱՎԵՐ
## ԹԻՎ ՀՓ-ՄԱԾՁԲ-02/21 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն «Հայփոստ» ՓԲԸ (այսուհետ նաև` Պատվիրատու կամ Ընկերություն)՝ կարիքների համար մաքրության ապահովման ծառայությունների ձեռքբերման նպատակով թիվ ՀՓ-ՄԱԾՁԲ-02/21 ծածկագրով անցկացվող ծառայությունների ձեռքբերման մրցույթի հայտարարության:

## Բաժին 1. Գնման ենթակա աշխատանքների անվանումը և բնութագրերը

1. Ծառայության անվանումը, տեխնիկական բնութագրերը, և այլ հատկանիշները ներկայացված են սույն հրավերին կից հավելված 1-ում և հավելված 2-ում:

## Բաժին 2. Որակավորման չափանիշները

| Մաս N | Որակավորման չափանիշներ | Սահմանված չափանիշները |
|---|---|---|
| 1 | **Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը** | ՀՀ ողջ տարածքում փոստային բաժանմունքներում ամենօրյա, շաբաթական, ամսական և սեզոնային մաքրման աշխատանքների իրականացում` մատակարարի նյութերով, աշխատանքային անհրաժեշտ պարագաներով և աշխատակիցներով |
| 2 | **Մասնագիտական փորձառություն** | Մասնագիտական փորձառությունը համապատասխան ոլորտներում սահմանվում է 3 տարի :<br>Մասնակիցը պետք է ունենա սույն հրավերի 1-ին բաժնում նշված աշխատանքների կատարման առնվազն 3 տարվա տվյալ բնագավառում աշխատելու փորձառություն:<br>Մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշը հավաստելու |

| | | |
|---|---|---|
| | | նպատակով մասնակիցն իր կողմից ներկայացված հայտին կից ներկայացնում է 2018-2020 թվականների ընթացքում իրականացված աշխատանքներն ապացուցող պայմանագրեր և կատարողական ակտեր, որոնց երեք տարվա գումարային արժեքը պետք է կազմի մասնակցի՝ երեք տարվա համար առաջարկվող գնի առնվազն 50%-ը: Երեք տարվա փորձի և/կամ կատարողականի ու առաջարկված գնի 50% հարաբերակցության պայմաններից որևէ մեկին չհամապատասխանելու դեպքում մասնակցի առաջարկը չի դիտարկվի հաջորդ փուլի համար: Մասնակցի «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված 3 տարվա աշխատանքային փորձառության պահանջները և այդ ընթացքում իր կողմից ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթերը: |
| 3 | **Տեխնիկական միջոցներ** | Արդի տեխնիկական միջոցների պարտադիր օգտագործում, որոնց առկայության պայմաններում կապահովվի մաքրման աշխատանքների անթերի կատարումը՝ հատուկ լվացող մեքենաներ, բարձր ճնշմամբ լվացող մեքենաներ ապակիների և պատերի լվացման համար, փոշեկուլներ, ձյուն մաքրող մեքենաներ, փափուկ կահույքի քիմմաքրման սարք: Մասնակիցը պարտավոր է իր հայտով ներկայացնել օգտագործվող սարքավորումների նկարագրերն ու տեխնիկական բնութագրերը: |
| 4 | **ֆինանսական միջոցներ.** | Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի հավաստման նպատակով մասնակիցը ներկայացնում է ՀՀ-ում գործող ռեզիդենտ բանկի կողմից տրված մրցույթին մասնակցության բանկային երաշխիք 15 000 000 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով, որը ենթակա է հետ վերադարձման մրցույթի ավարտից հետո: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը հավաստելու նպատակով մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն առ այն, որ իր չափանիշները համապատասխանում են տվյալ որակավորման պահանջին, ինչպես նաև ներկայացնում է պահանջվող բանկային երաշխիքը: |
| 5 | **Աշխատանքային ռեսուրսներ** | Ծառայությունները պատշաճ որակով, ժամանակին մատուցելու համար Մասնակիցը պետք է ունենա 150 և ավելի գործող աշխատակիցներ, որպես անհրաժեշտ քանակի մաքրող անձնակազմ ունենալու երաշխիք և սկսի |

| | | |
|---|---|---|
| | | ծառայությունների մատուցումը Պատվիրատուի պահանջված օրվանից սկսած: Որպես ապացույց մասնակիցը ներկայացնում է 2020թ. ընթացքում դրոշմանիշային փաստացի վճարների վերաբերյալ բանկային քաղվածք: Տարվա ընթացքում դրոշմանիշային վճարների միջին ամսական քանակը կհաշվարկվի որպես գործող աշխատակիցների քանակ:<br>Սույն մասով սահմանված որակավորման չափանիշը հավաստելու նպատակով Մասնակիցը իր հայտին կից ներկայացնում է վերոնշյալ փաստաթղթերը: |

## Բաժին 3. Մասնակցության իրավունքի պահանջները և դրանց գնահատման կարգը

| Մաս N | Մասնակցության իրավունքի տեսակը | Լրացման կարգը<br>(Լրացվում է պատասխանատու ստորաբաժանման կողմից) |
|---|---|---|
| 1 | Սնանկության, անվճարունակության կամ լուծարման գործընթացներում չգտնվելու վերաբերյալ տեղեկատվություն | 1. Սույն մասով նախատեսված մասնակցության իրավունքի չափանիշը գնահատվում է հիմք ընդունելով Մասնակցի ներկայացրած հայտարարությունը՝ սնանկության, անվճարունակության կամ լուծարման գործընթացներում չգտնվելու վերաբերյալ, և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկված չլինելու վերաբերյալ.<br>2. Մինչև պայմանագրի կնքումը պայմանագրի կնքման առաջարկություն ստացած մասնակիցը պարտավոր է Հանձնաժողովի պահանջով ներկայացնել սույն մասով նախատեսված հայտարարությունը հիմնավորող փաստաթղթերը: Որպես նման փաստաթուղթ, մասնակիցը ներկայացնում է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից տրված տեղեկանքն առ այն, որ տվյալ մասնակիցը չի գտնվում անվճարունակության, սնանկության կամ լուծարման գործընթացներում: |
| 2 | Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկված չլինելու վերաբերյալ տեղեկատվություն | 1. Սույն մասով նախատեսված մասնակցության իրավունքի չափանիշը գնահատիս հիմք ընդունելով Մասնակցի ներկայացրած հայտարարությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկված չլինելու վերաբերյալ՝ Գնումները համակարգողը ստուգում է նշված տեղեկությունը www.gnumner.am կայքում, ինչի վերաբերյալ Հանձնաժողովի՝ «Հաղթողին որոշելու» նիստում հայտարարում է Մասնակցի ներկայացրած |

| | | |
|---|---|---|
| | | տեղեկատվության հավաստիության կամ անհավաստիության վերաբերյալ:<br>2. Եթե Մասնակիցը ներկայացրել է սույն կետով նախատեսված պահանջի վերաբերյալ ոչ հավաստի տեղեկատվություն, ապա Մասնակիցն անմիջապես հայտարարվում է չորակավորված և վերջինս զրկվում է գնման գործընթացին հետագա մասնակցության իրավունքից: |
| | Գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին տեղեկատվություն | 1. Մասնակիցն իր հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին:<br>2. Եթե գնման գործընթացի ընթացքում մինչև պայմանագրի կնքումը պարզվում է, որ Մասնակիցը ներկայացրել է սույն կետով նախատեսված պահանջի վերաբերյալ ոչ հավաստի տեղեկատվություն, ապա Մասնակիցն անմիջապես հայտարարվում է չորակավորված և վերջինս զրկվում է գնման գործընթացին հետագա մասնակցության և պայմանագիր կնքելու իրավունքից: |

## Բաժին 4. Հայտերի բացման ձևը, վայրը, օրը և ժամը.

1. Հայտերի բացման օրը, վայրը և ժամը սահմանված են Հայտարարությամբ: Համաձայն հրապարակված հայտարարության հայտերը բացվում են «Հայփոստ» ՓԲԸ գլխամասային գրասենյակում, Սարյան 22 հասցեում, 23.02.2021թ-ին ժամը 15:00-ին: Մասնակիցները Հայտերի բացման նիստին մասնակցելու համար պետք է ներկայանան անձը հաստատող փաստաթղթով և լիազորությունները հավաստող փաստաթղթով: Միանձնյա գործադիր մարմնի (տնօրեն, գլխավոր տնօրեն և այլն) անձամբ մասնակցության դեպքում ներկայացվում է անձնագիր և պետական ռեգիստրի վկայականի համապատասխան ներդիր, որով հավաստվում է տվյալ անձի միանձնյա գործադիր մարմին նշանակված լինելու հանգամանքը, իսկ լիազորված անձի դեպքում ներկայացվում է իրավաբանական անձի կողմից պատշաճ կերպով տրված լիազորագիր:
2. Հայտերի բացման նիստում, որը տեղի է ունենում հայտարարությամբ հրապարակված հայտերի ներկայացման վերջնաժամկետին՝ ըստ գրանցման հերթականության Հանձնաժողովի կողմից բացվում են մասնակիցների կողմից ներկայացված ծրարները և հրապարակվում են ներկայացված փաստաթղթերը, որից հետո հայտարարվում է ընդմիջում հանձնաժողովի կողմից որոշված ժամանակահատվածով:

## Բաժին 5. Հայտերի ներկայացման պայմանները, ներառյալ ձևը, տեղը, ժամկետը և հայտի լեզուն, հայտերի վավերականության ժամկետը.

1. Մասնակիցները հայտը ներկայացնում են սույն հրավերի 4-րդ բաժնում սահմանված կարգով և ժամկետներում: Հայտերը կարող են ներկայացվել նաև հայտերի բացման նիստի օրը՝ մինչև Հանձնաժողովի նախագահի կողմից հայտերի բացման նիստը բացված հայտարարվելը՝ ժամը 15.00-ն:

2. Հայտերը ներկայացվում են հայերեն լեզվով:
3. Հայտերը ներկայացվում են փաստաթղթային ձևով: Փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում և կնքվում է (եթե կնքելու պայմանը կիրառելի է տվյալ մասնակցի համար) մասնակցի կողմից:
4. Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և երկու պատճեից:
5. Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են "բնօրինակ" և "պատճեն" բառերը:
6. Ծրարը և Հրավերով նախատեսված` մասնակցի կազմած փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող մասնակցի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը (այսուհետ` գործակալ):
7. Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս` լիազորությունը հավաստող փաստաթուղթը (լիազորագիրը):
8. Ծրարի վրա հայերեն լեզվով նշվում են`
    ա) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն),
    բ) մրցույթի ընթացակարգի ծածկագիրը,
    գ) "չբացել մինչև հայտերի բացման նիստը" բառերը,
    դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը, հասցեն և էլեկտրոնային փոստի հասցեն (եթե մասնակիցն ունի էլեկտրոնային փոստի հասցե):
9. Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում` ըստ ստացման հերթականության` ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով այդ մասին վերջինիս տրվում է տեղեկանք:
10. Հայտերը վավերական են մինչև պայմանագրի կնքումը:

## Բաժին 6. Եթե գնումն իրականացվում է չափաբաժիններով և մասնակիցներին թույլատրվում է հայտեր ներկայացնել գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների միայն մի մասի համար, ապա դրա պայմանները և կարգը.

Սույն հրավերի 1-ին բաժնում ներկայացված աշխատանքները հանդիսանում են մեկ չափաբաժին:

## Բաժին 7. Հայտով ներկայացվող գնի հաշվարկման կարգը: Նշում այն մասին, որ առաջարկվող գինը ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, որի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով.

1. Առաջարկվող գինը աշխատանքների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի և այլ վճարումների գծով մասնակցի կողմից կատարված ծախսերը:

2. Մասնակիցը ներկայացնում է իր կողմից առաջարկվող աշխատանքների գնի հաշվարկ, որում առանձին տողով նշվում է ավելացված արժեքի հարկը: Մասնակցի կողմից ներկայացված գինը չի կարող պակաս լինել աշխատանքների ինքնարժեքից, որի հաշվարկը ներկայացվում է հայտով:
3. Եթե միաժամանակյա բանակցությունների արդյունքում Մասնակիցը ներկայացնում է նոր գնային առաջարկ, որն ավելի ցածր է քան սկզբնական գնային առաջարկով ներկայացված ինքնարժեքի հաշվարկը, ապա Մասնակիցը՝ հաղթող ճանաչվելու դեպքում մինչև պայմանագրի կնքումը ներկայացնում է նոր գնային առաջարկի հաշվարկը, որով հավաստվում է Մասնակցի կողմից ներկայացված նոր գնի՝ ինքնարժեքից ցածր չլինելու հանգամանքը: Եթե Մասնակիցն իր կողմից միաժամանակյա բանակցությունների ընթացքում ներկայացված նոր գինը չի կարողանում հավաստել և ներկայացված գնի ինքնարժեքի նոր հաշվարկը Հանձնաժողովի կողմից ուսումնասիրության արդյունքում գնահատվում է անարժանահավատ, ապա հանձնաժողովը նշված մասնակցին համարում է չորակավորված, ինչի արդյունքում կիրառվում են սույն Հրավերով սահմանված ընթացակարգերը: Մասնակցի կողմից ներկայացված նոր գնի հաշարկը Հանձնաժողովի կողմից գնահատվում է անարժանահավատ, եթե մասնակիցը նոր գնի հիմնավորման համար ինքնարժեքի տարրերից կատարել է այնպիսի նվազեցումներ, որոնք չեն հիմնավորվում Մասնակցի կողմից ներկայացրած այլ փաստաթղթերով կամ տեղեկություններով:

## Բաժին 8. Հայտի և պայմանագրի կատարման ապահովմանը վերաբերող պահանջները.

1. Մասնակիցը հաղթող ճանաչվելու դեպքում պետք է ապահովի սույն հրավերի 1-ին բաժնով նախատեսված աշխատանքների կատարումը նույն բաժնով նախատեսված գնման ժամանակացույցին համապատասխան: Մասնակիցը սույն պահանջի ապահովման նպատակով ներկայացնում է հայտարարություն առ այն, որ հաղթող ճանաչվելու դեպքում կապահովի սույն հրավերով սահմանված պայմանագրի ապահովման միջոցները:
2. Հաղթող ճանաչված մասնակիցը մինչև պայմանագրի կնքումը ներկայացնում է կնքվելիք պայմանագրի ընդհանուր գնի 5 տոկոսի չափով կանխիկ դրամի ապահովում՝ դրամը մուտքագրելով կամ փոխանցելով «Հայփոստ» ՓԲԸ համապատասխան բանկային հաշվին, կամ ներկայացնում է նույն չափով (պայմանագրի ընդհանուր գնի 5 տոկոսի չափով) տուժանքի համաձայնագիր:

## Բաժին 9. Հայտը մերժելու հիմքերը.

Մասնակցի ներկայացրած հայտը մերժվում է, եթե այն օբյեկտիվ որևէ չափանիշով չի համապատասխանում Հրավերի պահանջներին, մասնակցի կողմից չեն ներկայացվել սույն հրավերով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերն ու տեղեկությունները կամ մասնակցի ներկայացրած հայտն այլ կերպով չի համապատասխանում սույն հրավերի պահանջներին:

## Բաժին 10. Հայտերի գնահատման և հաղթողի ընտրության կարգը

1. Ծրարների բացման և դրանցում առկա փաստաթղթերի հրապարակումից հետո հանձնաժողովը հայտարարում է ընդմիջում՝ ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելու նպատակով: Ընդմիջման ժամկետը՝ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման գործընթացի ժամանակատարությունից կախված հանձնաժողովի կողմից կարող է սահմանվել մինչև 5 աշխատանքային օր:
2. Ընդմիջում հայտարարելիս մասնակիցները հանձնաժողովի կողմից տեղեկացվում են, որ հրավերով սահմանված կարգով հանձնաժողովի հաջորդ նիստի ընթացքում ոչ գնային չափանիշներին բավարարած մասնակիցների միջև անցկացվելու են միաժամանակյա բանակցություններ:
3. Ընդմիջումը հայտարարվելուց հետո հանձնաժողովի անդամները ուսումնասիրում են ներկայացված փաստաթղթերը և գնահատում են ոչ գնային առաջարկները: Ոչ գնային առաջարկները (որկավորման չափանիշները, մասնակցության իրավունքը, տեխնիկական բնութագրերը և այլն) գնահատելիս հանձնաժողովը կայացնում է որոշում նշված ոչ գնային առաջարկները հրավերի պայմաններին բավարարելու կամ չբավարարելու վերաբերյալ: Եթե որևէ մասնակցի ներկայացրած հայտը չի համապատասխանում Հրավերի ոչ գնային չափանիշներին, ապա Հանձնաժողովի արձանագրության մեջ նշվում են չբավարարելու համար հիմք հանդիսացած փաստերը:
4. Հրավերով սահմանված ոչ գնային չափանիշները գնահատվում են հետևյալ կարգով՝
ա) «Գնման ընթացակարգին մասնակցության իրավունք» ոչ գնային չափանիշը գնահատվում է հիմք ընդունելով Մասնակցի ներկայացրած հայտարարությունը՝ սնանկության, անվճարունակության կամ լուծարման գործընթացներում չգտնվելու վերաբերյալ, և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկված չլինելու վերաբերյալ.
բ) «Որակավորման չափանիշներ» ոչ գնային չափանիշի գնահատման դեպքում գնման գործընթացի արձանագրությունում նշվում են այն մասնակիցները, որոնց որակավորման չափանիշները ըստ ներկայացված փաստաթղթերի չեն համապատասխանում հրավերով սահմանված որակավորման չափանիշներին.
Սույն կետի «ա» ենթակետով նախատեսված մասնակցության իրավունքի չափանիշը գնահատիս հիմք ընդունելով Մասնակցի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկված չլինելու վերաբերյալ հայտարարությունը՝ Գնգնումները համակարգողը ստուգում է նշված տեղեկությունը www.gnumner.am կայքում, ինչի վերաբերյալ Հանձնաժողովի՝ «Հաղթողին որոշելու» նիստում հայտարարություն է կատարվում Մասնակցի ներկայացրած տեղեկատվության հավաստիության կամ ոչ հավաստիության վերաբերյալ: Եթե Մասնակիցը ներկայացրել է սույն կետով նախատեսված պահանջի վերաբերյալ ոչ հավաստի տեղեկատվություն, ապա Մասնակիցն անմիջապես հայտարարվում է չորակավորված և վերջինս զրկվում է գնման գործընթացին հետագա մասնակցության իրավունքից:
5. Եթե Հաղթող ճանաչված մասնակցի ներկայացրած փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ վերջինիս տվյալները օբյեկտիվորեն չեն բավարարում Հրավերի պահանջներին, ապա Հանձնաժողովը առաջարկում է պայմանագրի կնքման նպատակով որակավորման փաստաթղթերը ներկայացնել երկրորդ (իսկ երկրորդի չհամապատասխանելու դեպքում) հաջորդաբար մյուս տեղերը զբաղեցրած մասնկիցներին՝ տեղեկացնելով, որ պայմանագիրը կկնքվի, եթե ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում համապատասխան մասնակիցը կհամարվի որակավորված:
6. Եթե Հանձնաժողովը գտնում է որ երկրորդ և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները ավելի բարձր են քան ընկերությունը նախատեսել էր տվյալ գնումը կատարելու համար կամ, եթե շուկայում նմանատիպ գնման առարկան կարելի է ձեռք բերել ավելի էժան գնով, ապա Հանձնաժողովն իրավունք ունի գնման գործընթացը հայտարարել չեղյալ և

ուղղակի պայմանագիր կնքել շուկայում էժան գին առաջարկող անձի հետ, պայմանով՝ որ վերջինս համապատասխանում է հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Հակառակ դեպքում Հանձնաժողովը գնման գործընթացը հայտարարում է չեղյալ և պատասխանատու ստորաբաժանումը նախաձեռնում է նոր գնման գործընթաց:

7. Հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստից հետո հրավիրվող նիստը մրցույթի հաղթողին որոշելու նիստն է: Նշված նիսը իրավազոր է, եթե նիստին մասնակցում են Հանձնաժողովի անդամների երկու երրորդը:
8. Հանձնաժողովի նախագահը (նրան փոխարինող անձը) հայտարարում է հայտերի գնահատման արդյունքները և նիստին ներկա մասնակիցներին հայտնում է, թե որ մասնակցի ներկայացրած ոչ գնային առաջարկները չեն համապատասխանում հրավերի պահանջներին, որի արդյունքում նշված մասնակիցը համարվում է չորակավորված:
9. Հանձնաժողովն իրավունք ունի մասնակցից պարզաբանում պահանջել ներկայացված հայտում առկա դրույթների անճշտությունների վերաբերյալ: Նշված դեպքում, եթե մասնակցի ներկայացրած բացատրությունը հնարավորություն է ընձեռում պարզաբանում մտցնել հայտում առկա դրույթի վերաբերյալ, ապա Հանձնաժողովը հիմք ընդունելով նշված պարզաբանումը մասնակցին համարում է որակավորված: Հակառակ դեպքում արձանագրվում է, որ մասնակցի ներկայացրած հայտում առկա ոչ գնային առաջարկները չեն համապատասխանում հրավերի պահանջներին:
10. Եթե մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ տառերով և թվերով գրված տվյալների միջև, ապա Հանձնաժողովի կողմից հիմք է ընդունվում տառերով գրվածը:
11. Հանձնաժողովի նախագահը (նրան փոխարինող անձը) ոչ գնային պահանջներին համապատասխանող բոլոր մասնակիցներին (հանձնաժողովի նիստին ներկա մասնակիցներին) կրկին պարզաբանում է միաժամանակյա բանակցությունների անցկացման ընթացակարգը և Հանձնաժողովի քարտուղարին առաջարկում է մասնակիցներին տրամադրել բանակցությունների թերթիկները:
12. Հանձնաժողովի նախագահը ֆիքսում է բանակցությունների ժամանակը, որը սահմանվում 30 րոպեից մինչև մեկ ժամ՝ կախված գնային առաջարկների ներկայացման ժամանակատարությունից: Բանակցությունների ժամանակահատվածը ֆիքսելուց Հանձնաժողովը կարող է հաշվի առնել նաև մրցույթի մասնակիցների առաջարկները:
13. Բանակցությունների անցկացման ժամանակահատվածը ֆիքսելուց հետո մասնակիցները բանակցությունների թերթիկում (թերթիկի ձևաթուղթը կցված է սույն հավելվածին) լրացնում են իրենց կողմից առաջարկվող նոր գինը (եթե այդպիսին առաջարկվում է մասնակցի կողմից):
14. Հանձնաժողովի նախագահը մասնակիցների կողմից լրացված բանակցությունների թերթիկները միաժամանակ հավաքում է մասնակիցներից, որից հետո հանձնաժողովի նախագահը կամ հանձնաժողովի այլ անդամը հայտարարում են մասնակիցների անունները (անվանումները) ու նրանց կողմից առաջարկվող նոր գները:
15. Մասնակիցների կողմից առաջարկված նոր գները հայտարարելուց հետո Հանձնաժողովի նախագահը բանակցությունների թերթիկները կրկին միաժամանակ բաժանում է մասնակիցներին՝ առաջարկելով կրկին ներկայացնել նոր գնային առաջարկ:
16. Վերը նշված միաժամանակյա բանակցությունների գործընթացը շարունակվում է մինչև սահմանված բանակցությունների ժամանակահատվածի ավարտը:
17. Բանակցությունների ժամանակահատվածի ավարտից հետո Հանձնաժողովի նախագահը միաժամանակ հավաքում է բանակցությունների թերթիկները, հայտարարում է վերջնական գները, որից հետո հայտարարում է ընդմիջում մրցույթի հաղթողին հայտարարելու նպատակով: Ընդմիջման ավարտին Հանձնաժողովի նախագահը հայտարարում է միցույթի հաղթողին և պարզաբանում, որ նիստի արձանագրությունը մասնակիցները կարող են ստանալ Հանձնաժողովի քարտուղարից:
18. Եթե Մրցույթի արդյունքներով լավագույն գնային առաջարկը ներկայացրած մասնակցի գնային առաջարկները, այդուհանդերձ, ավելի բարձր են քան նախապես նախատեսվել էր ընկերության կողմից, կամ, եթե Ընկերության կողմից նախապես կատարված ուսումնասիրությունների համաձայն մրցույթի արդյունքում առաջարկվող գները բարձր են շուկայում առկա գներից (առկա է

| |
|---|
| հնարավորություն գնման առարկան ձեռք բերել ավելի էժան գներով), ապա գնահատող հանձնաժողովը կարող է առաջարկել մրցույթի արդյունքներով լավագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին փոփոխել իր կողմից ներկայացրած վերջնական գինը և պայմանագիրը կնքել շուկայում առկա խելամիտ գնով (Ընկերության ուսումնասիրության արդյունքում խելամիտ, ընդունելի և առկա գինով): Եթե մրցույթի արդյունքներով լավագույն առաջարկ ներկայացրած մասնակիցը չի համաձայնվում Հանձնաժողովի առաջարկին, ապա Հանձնաժողովի պատճառաբանված առաջարկության հիման վրա Ընկերության ղեկավարը մրցույթը հայտարարում է չեղյալ:<br>19. Մրցույթի հաղթողին հայտարարելու վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը տրամադրվում է մրցույթի բոլոր մասնակիցներին՝ վերջիններիս պահանջով: Մրցույթի հաղթողին հայտարարելու վերաբերյալ ընդմիջման ժամկետը չի կարող գերազանցել 2 աշխատանքային օրը, որը սահմանվում է Հանձնաժողովի վերջնական (մրցույթի հաղթողին հայտարարելու) արձանագրությունը կազմելու համար:<br>20. Մրցույթի հաղթողին հայտարարելու վերաբերյալ Հանձնաժողովի արձանագրությամբ սահմանվում են նաև մրցույթում 2-րդ և հաջորդաբար այլ տեղերը զբաղեցրած մասնակիցները: |

## Բաժին 11. Գնման գործընթացի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու կարգը, տեղեկություններ մասնակիցների հետ կազմակերպվելիք հանդիպումների մասին, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի քարտուղարի անունը և ազգանունը.

| |
|---|
| Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ պահանջելու իրավերի պարզաբանում:<br>2. Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում:<br>3. Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրվան հաջորդող օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:<br>4. Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է իրավերի բովանդակության շրջանակից.<br>5. Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ իրավերում կարող են կատարվել փոփոխություններ:<br>6. Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում:<br>7. Փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից: Փոփոխությունների կատարման դեպքում, եթե տվյալ գնման գործընթացի համար սահմանվել է հայտերի ապահովման պահանջ, ապա մասնակիցները պարտավոր են երկարաձգել իրենց |

ներկայացրած հայտի ապահովման գործողության ժամկետը կամ ներկայացնել հայտի նոր ապահովում:

8. Պարզաբանում և հրավերում փոփոխություններ կատարելու գործողությունների արդյունքների մասին կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը:
9. Գնահատող Հանձնաժողովի քարտուղարն է Լիանա Բախշյանը:

## Բաժին 12. Օրենքի և իրավական այլ ակտերի դրույթներին կատարված հղումները.

1. Սույն հրավերը կազմվել է և գնման գործընթացն իրականացվում է «Հայփոստ» փակ բաժնետիրական Գնումների գործընթացի կազմակերպման կարգով սահմանված կանոններով և ընթացակարգերով:

2. «Հայփոստ» ՓԲԸ-ն հանդիսանալով հանրային ծառայություններ մատուցող ընկերություն իր կարիքների համար գնումներն իրականացնում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 50-րդ և 51-րդ հոդվածներով սահմանված նորմերին համապատասխան՝ ընկերության Գլխավոր գործադիր տնօրենի 08.09.2011թ-ի թիվ 515-Լ հրամանով հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգով:

3. Գնումների գործընթացի վերաբերյալ բողոքների քննարկումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով:

## Բաժին 13. Պայմանագիր կնքելու առաջարկը ներկայացնելու պայմանները և պայմանագիր կնքելու կարգը.

1. Մրցույթի հաղթողի հետ Բանակցությունների ավարտից հետո մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությունը կնքում է պայմանագիր: Պայմանագիր կնքելու նպատակով Հաղթող ճանաչված մասնակցին Ընկերությունը ներկայացնում է առաջարկություն սույն կետով սահմանված ժամկետի ավարտից առնվազն 3 աշխատանքային օր առաջ:
2. Եթե մասնակիցներն իրենց որակավորման չափանիշների և մասնակցության իրավունքի հավաստման վերաբերյալ հայտով ներկայացրել են հայտարարություններ, ապա Հանձնաժողովը հաղթող ճանաչված մասնակցից կարող է պահանջել նշված հայտարարությունները հիմնավորող սույն հրավերով սահմանված փաստաթղթերը, որոնց ուսումնասիրության արդյունքում որոշում է կայացվում մասնակցի որակավորման և այլ չափանիշների համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ և իրկանացվում են Գնումների կարգով ու սույն հրավերով սահմանված գործընթացները:
3. Եթե մրցույթի հաղթողը ցանկացած պատճառով հրաժարվում է պայմանագիր կնքելուց, ապա պայմանագիրը կարող է կնքվել 2-րդ, իսկ վերջինիս հրաժարվելու դեպքում հաջորդաբար այլ տեղերը զբաղեցրած մասնակիցների հետ: 2-րդ և հաջորդաբար այլ տեղերը զբաղեցրած մասնակիցների հետ պայմանագիր կնքվում է, եթե նշված մասնակիցների կողմից առաջարկված գները ընդունելի են

Ընկեության համար: Առաջարկված գների ընդունելի լինելու հանգամանքը որոշվում է Ընկերության ղեկավարի կողմից:

4. Պայմանագիրը կնքելուց հետ, դրա գործողության ընթացքում, եթե Ընկերությունը շուկայում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզում է, որ շուկայում առկա են այլ Կատարողի կողմից առաջարկվող նույն աշխատանքների համար առաջարկվող ավելի էժան գներ, ապա Ընկերությունը կատարողին առաջարկում է համապատասխան չափով իջեցնել աշխատանքների գները: Եթե Կատարողը համաձայնվում է համապատասխան չափով իջեցնել նշված գները, ապա պայմանագրում կատարվում են համապատասխան փոփոխություններ: Հակառակ դեպքում, եթե Կատարողը չի համաձայնվում գների իջեցման վերաբերյալ Ընկերության առաջարկին, ապա Ընկերությունն իրավունք է ստանում միակողմանիորեն լուծել պայմանագիրը՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում: Ընկերության կողմից պայմանագրի լուծման վերաբերյալ որոշումը կայացնելիս գնահատվում են պայմանագրի լուծման արդյունքում Աշխատանքների չկատարման հետ կապված ռիսկերը:
5. Եթե հաղթող ճանաչված մասնակցի հետ կնքվում է պայմանագիր և պայմանագրի գործողության ընթացքում պարզվում է, որ գնման գործընթացի ընթացքում մինչև պայմանագրի կնքումը Մասնակիցն իր հայտարարությամբ ներկայացրել է գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության վերաբերյա ոչ հավաստի տեղեկատվություն, ապա Ընկերոթյունն իրավունք ունի լուծել պայմանագրը և պահանջել վնասների հատուցում:

## Բաժին 14. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակման տարբերակը.

1. Եթե պայմանագրի գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա Ընկերությունը՝ տեղեկագրում հրապարակելու նպատակով, պայմանագիրը կնքելու օրվանից հետո 7 օրացուցային օրվա ընթացքում, լիազորված մարմին է ներկայացնում այդ մասին հայտարարություն, բացառությամբ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող գնումների:
2. Կնքված պայմանագրի մասին հայտարարությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝
   1) գնման առարկայի համառոտ նկարագրությունը.
   2) պատվիրատուի անվանումը եւ հասցեն.
   3) պայմանագրի կնքման ամսաթիվը.
   4) ընտրված մասնակցի (մասնակիցների) անվանումը եւ հասցեն.
   5) մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները և պայմանագրի գինը.
   6) մասնակիցների ներգրավման նպատակով իրականացված հրապարակումների մասին տեղեկությունները (եթե կիրառելի են).
   7) կիրառված գնման ընթացակարգը և դրա ընտրության հիմնավորումը:

## Բաժին 15. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները (անգործությունը) և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը.

Գնումների գործընթացի վերաբերյալ բողոքների քննարկումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

## Բաժին 16. Հայտի նախապատրաստման, ներկայացման, բացման և գնահատման, ինչպես նաև գնումների վերաբերյալ անհրաժեշտ այլ տեղեկատվություն:

| |
|---|
| Սույն հրավերով նշված տեղեկություններից և փաստաթղթերից բացի այլ տեղեկատվություն ներկայացնելու պայմանը «ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ» : |

## Բաժին 17. Հայտերի պատրաստման հրահանգները.

ՀՐԱՀԱՆԳ

Մրցույթի հայտերի պատրաստման

1. Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել Մասնակիցներին մրցույթի հայտը պատրաստելիս:
2. Նպատակահարմարության դեպքում Մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:
3. Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է Պատվիրատուին ներկայացնել մրցույթի հայտ: Մրցույթի հայտը սույն հրավերով նախատեսված կարգով մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող անձի կողմից նախապատրաստված և Պատվիրատուին ներկայացված առաջարկն է (Ձև N 1), որին կցվում են Հրավերով և սույն հրահանգով պահանջվող փաստաթղթերը:
4. Մրցույթի հայտը (ներառվող բոլոր փաստաթղթերը) պետք է կազմված լինի հայերեն լեզվով:
5. Մասնակիցը որակավորման իր չափանիշները հավաստելու համար Ձև 1-ով նախատեսված առաջարկին կից ներկայացնում է Հրավերի 2-րդ բաժնով սահմանված որակավորման չափանիշների վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը և տեղեկությունները՝ սույն հրահանգին կից Ձև 2-ով սահմանված ձևաչափով:
6. Մասնակիցն իր մասնակցության իրավունքը հավաստելու համար Ձև 1-ով նախատեսված առաջարկին կից ներկայացնում է Հրավերի 3-րդ բաժնով սահմանված մասնակցության իրավունքի չափանիշների վերաբերյալ փաստաթղթերը և տեղեկությունները՝ սույն հրահանգին կից Ձև 3-ով սահմանված ձևաչափով:
7. Մասնակիցը Ձև 1-ով նախատեսված առաջարկին կից ներկայացնում է պայմանագրի ապահովման միջոցներ՝ համաձայն հրավերի 8-րդ բաժնով սահմանված պայմանների: Հայտի և պայմանագրի ապահովման միջոցները ներկայացվում են սույն հրահանգի Ձև 4-ով սահմանված ձևաչափով:
8. Մասնակիցը ներկայացնում է գնային առաջարկ սույն հրահանգի Ձև 5-ով սահմանված ձևաչափով, որը աշխատանքների արժեքից բացի ներառում է նաև տուրքերի, հարկերի և այլ վճարումների գծով ծախսերը, ինչպես նաև փոխադրման, ապահովագրման և այլ վերագրելի ծախսերը (եթե այդպիսիք առկա են): Մասնակիցը գնային առաջրկին կից ներկայացնում է ինքնարժեքի հաշվարկ:
9. Մասնակիցը մրցույթի հայտը ներկայացնում է սույն Հրավերով սահմանված կարգով:
10. Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում և կնքվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից, ինչպես նաև Հրավերով սահմանված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և

«պատճե» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կողմից կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս կողմից լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե մրցույթի հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

11. Սույն հրահանգի 10-րդ կետում նշված ծրարի վրա մրցույթի հայտը կազմելու լեզվով նշվում են՝

ա) պատվիրատուի անվանումը և մրցույթի հայտի ներկայացման վայրը (հասցեն).

բ) մրցույթի ծածկագիրը.

գ) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

4.3 Սույն հրահանգի 10-րդ և 11-րդ կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը մերժվում են և առանց բացվելու վերադարձվում ներկայացնողին:

## Բաժին 18 Պայմանագրի նախագիծը.

### ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան «» ------------ 2021թ.

«_____» ՍՊԸ, այսուհետ՝ Կատարող, ի դեմս , մի կողմից, և «Հայփոստ» ՓԲԸ, այսուհետ՝ Պատվիրատու, ի դեմս Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար Հայկ Ավագյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության և «Հայփոստ» ՓԲԸ դիտորդ խորհրդի 03.06.2011թ-ի որոշման հիման վրա մյուս կողմից, այսուհետ՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### ԳԼՈՒԽ 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1 Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխան աշխատանքներ (այսուհետ՝ Աշխատանքներ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքների արդյունքը և վճարել դրա դիմաց սույն պայմանագրով սահմանված պայմաններով և ժամկետներում:

1.2 Սույն պայմանագիրը ուժի մեջ է 00.00.2021թ -ից մինչև 00.00.2023թ:

1.3 Աշխատանքների կատարման եղանակները Կատարողի կողմից որոշվում են ինքնուրույն, բացառությամբ այն պայմանների, որոնք սահմանված են սույն պայմանագրով և դրա հավելվածներով:

1.4 Աշխատանքները կատարվում են Կատարողի ուժերով, սարքավորումներով և միջոցներով:

1.5 Աշխատանքների կատարումն իրականացվում է փուլերով կամ մեկ փուլով` Պատվիրատուի կողմից ներկայացված պատվեր-հայտի հիման վրա։

1.6 Յուրաքանչյուր փուլի պատվեր-հայտը Կատարողին տրամադրվում է փաստաթղթային եղանակով` առձեռն հանձնելով կամ փոստի միջոցով առաքելով կամ էլեկտրոնային եղանակով` Կատարողի` սույն պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեին ուղակելու միջոցով:

1.7 Յուրաքանչյուր փուլի պատվեր-հայտը Կատարողին տրամադրվում է փաստաթղթային եղանակով` առձեռն հանձնելով կամ փոստի միջոցով առաքելով կամ էլեկտրոնային եղանակով` Կատարողի` սույն պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեին ուղակելու միջոցով:

## ԳԼՈՒԽ 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի`

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքների ընթացքը և որակը` առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Առանց Աշխատանքների արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողի կողմից կատարված Աշխատանքները չեն համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով և տվյալ փուլի պատվեր-հայտով նախատեսված Տեխնիկական բնութագրի ու առաջադրանքի պահանջներին և (կամ) խախտել է Աշխատանքների կատարման ժամկետը և Աշխատանքները չեն կարող կատարվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

2.1.3 Չընդունել Աշխատանքների արդյունքը` ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, Տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում` իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.4 Մինչև Աշխատանքների արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ նախնական գրավոր ծանուցմամբ հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց, Կատարողին վճարելով մինչև վերջինիս կողմից ծանուցման ստանալու պահը փաստացի կատարված աշխատանքների գինը, ինչպես նաև հատուցելով պայմանագրի չկատարման արդյունքում Կատարողի կրած վնասները.

2.1.5 Պահանջել Կատարողից պատշաճ կերպով կատարելու սույն պայմանագրով սահմանված իր պարտավորությունները.

2.1.6 Իրականացնել օրենքով և սույն պայմանագրով սահմանված իր այլ իրավունքները:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին և սույն պայմանգրի այլ պայմաններին համապատասխան կատարված Աշխատանքների արդյունքը, իսկ Աշխատանքների արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին.

2.2.2 Աշխատանքների արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3 Պատշաճ կերպով կատարել սույն պայմանագրով և օրենքով սահմանված իր այլ պարտավորությունները:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Մինչև Աշխատանքների արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու փաստացի կատարված աշխատանքների համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքի.

2.3.2 Մինչև Աշխատանքների արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին.

2.3.3 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը.

2.3.4 Իրականացնել օրենքով և սույն պայմանագրով սահմանված իր այլ իրավունքները:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրով և դրա N 1 հավելվածով սահմանված պայմաններով կատարել Պատվիրատուի կողմից հանձնարարված աշխատանքները.

2.4.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները.

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը.

2.4.5 Աշխատանքները կատարելիս խնամքով վերաբերվել Պատվիրատուի համապատասխան Օբյեկտներին ու գույքին և իր գործողություններով չփչացնել կամ չվնասել Պտվիրատուի գույքը.

2.4.6 Իր հաշվին վերացնել Աշխատանքները կատարելիս Պատվիրատուի համապատասխան օբյեկտին կամ գույքին պատճառված վնասները կամ Պատվիրատուի պահանջով փոխհատուցել պատճառված վնասները վերացնելու ուղղությամբ Պատվիրատուի կատարած ծախսերը.

2.4.7 Աշխատանքները կատարելուց հետո օբյեկտը կամ գույքը Պատվիրատուին հանձնել այնպիսի վիճակում ինչպիսին ստացել էր Աշխատանքների կատարման սկզբին:

2.4.8 Պատշաճ կերպով կատարել սույն պայմանագրով և օրենքով սահմանված իր այլ պարտավորությունները:

## ԳԼՈՒԽ 3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը Աշխատանքների կատարման ավարտից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում Աշխատանքների կատարման մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 2):

3.2 Պատվիրատուն (Պատվիրատուի համապատասխան աշխատակիցները) հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Կատարողի (կատարողի համապատասխան իրավասու աշխատակիցների) ներկայությամբ զննում է կատարված Աշխատանքների որակի ու այլ պայմանների համապատասխանությունը սույն պայմանագրի պայմաններին և, համապատասխանության դեպքում, ստորագրում է հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակները, որոնցից մեկ օրինակը վերադարձնում է Կատարողին:

3.3 Պատվիրատուի կողմից սույն Գլխով սահմանված կարգով Աշխատանքների որակի և Աշխատանքների կատարման այլ պայմանների համապատասխանության ստուգում իրականացնելիս հանձնվող Աշխատանքների արդյունքներում թերությունների հայտնաբերման դեպքում` Թերությունների հայտնաբերման մասին Կատարողի (կատարողի համապատասխան իրավասու աշխատակիցների) ներկայությամբ այդ մասին նշվում է հանձնման-ընդունման արձանագրությունում` առանց ստորագրելու հանձնման-ընդունման արձանագրությունը, ինչի արդյունքում Աշխատանքները համարվում են չընդունված և Կատարողը պարտավորվում է հայտնաբերված թերությունները վերացնել Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում:

3.4 Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում թերությունների չվերացման դեպքում Աշխատանքների արդյունքները համարվում են Կատարողի կողմից չհանձնված, որի դեպքում Պատվիրատուն իրավունք ունի նախաձեռնել Աշխատանքների չհանձնման հետ կապված սույն պայմանագրով սահմանված գործընթացները:

3.5 Աշխատանքների արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում հանձնման-ընդունման արձանագրությունը երկկողմանի ստորագրելու պահից:

## ԳԼՈՒԽ 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՒ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված Աշխատանքների գինը հաշվարկվում է սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 Հավելվածով նախատեսված գնացուցակին և քանակին համապատասխան:

4.2 Վճարումը կատարելու նպատակով Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը երկկողմանի ստորագրվելուց հետո երկօրյա ժամկետում կազմում և Պատվիրատուին է ներկայացնում հաշիվ ապրանքագիր, որի տվյալները պետք է համապատասխանեն հանձնման-ընդունման արձանագրությունում նշված տվյալներին:

4.3 Պատվիրատուն կատարված Աշխատանքների դիմաց վճարում է անկանխիկ` դրամական միջոցները Կատարողի` սույն պայմանագրում նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հաշիվ-ապրանքագրի և հանձման-ընդունման արձանագրության ստորագրման օրվան հաջորդող մինչև 20 (քսան) բանկային օրվա ընթացքում:

## ԳԼՈՒԽ 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքների որակի և այլ պայմանների սույն պայմանագրով, դրա N 1 հավելվածով և տվյալ փուլի պատվեր-հայտով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման, 2.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքները չընդունվելու յուրաքանչյուր դեպքում Պատվիրատուն կարող է Կատարողից գանձել տուգանք` սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված Պայմանագրի գնին համապատասխան հաշվարկված տվյալ պահի դրությամբ կատարված Աշխատանքների ընդհանուր գնի 0,5 %-ի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքների կատարման ժամկետները խախտելու դեպքում Պատվիրատուն կարող է Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձել տույժ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված Պայմանագրի գնին համապատասխան հաշվարկված տվյալ պահի դրությամբ կատարված Աշխատանքների ընդհանուր գնի 0,05%-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով` Աշխատանքների չկատարված մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 2.4.5, 2.4.6, 2.4.7 և 2.4.8 կետերով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում Պատվիրատուն կարող է պահանջել Կատարողից վճարել տուգանք տվյալ փուլի պատվեր-հայտով նախատեսված Աշխատանքների կատարման համար վճարվելիք գումարի 10 (տասը) տոկոսի չափով:

5.5 Սույն պայմանագրի 5.2, 5.3 և 5.4 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքները կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.6 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Կատարողը կարող է Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար կիրառել տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:
5.7 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
5.8 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## ԳԼՈՒԽ 6. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ, ԽՈՇՈՐ ԳՈՐԾԱՐՔ

6.1 Սույն պայմանագրով Կողմերը հավաստիացնում են, որ պայմանագրի կնքման կապակցությամբ Կողմերի մոտ առկա չեն շահերի բախման (շահագրգռվածության) կամ խոշոր գործարքի՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պայմանների առկայության այնպիսի պայմաններ, որոնք կարող են հիմք հանդիսանալ սույն պայմանագրի հետագա վիճարկման համար:
6.2 Սույն պայմանագրով Կողմերի ղեկավարները, որոշումների ընդունման վրա ազդեցություն ունեցող անձինք և լիազորված ներկայացուցիչները չեն հանդիսանում պայմանագրի կնքման կապակցությամբ շահագրգռ անձինք և փոխկապակցված չեն Կողմերի հետ: Սույն պայմանագրի իմաստով փոխկապակցվածությունը մեկնաբանվում է համաձայն՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթների:
6.3 Սույն պայմանագրով Կողմերը պարտավորվում են շահագրգռվածության կամ շահերի բախման ցանկացած դեպքի վերաբերյալ ծանուցել միմյանց՝ իրենց հայտնի դառնալու պահից 5-օրյա ժամկետում:
6.4 Սույն գլխով նախատեսված պայմանների խախտման դեպքերում Կողմը պարտավորվում է հատուցել մյուս Կողմի կրած իրական վնասները:

## ԳԼՈՒԽ 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## ԳԼՈՒԽ 8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 Սույն պայմանագրում բոլոր փոփոխությունները և լրացումները պետք է կատարվեն գրավոր:

8.2 Այն դեպքում, երբ սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ կամ իրականությանը չհամապատասխանող փաստաթղթեր (տեղեկություններ, տվյալներ) կամ սույն պայմանագրի կնքման նպատակով անցկացված գնման ընթացակարգի արդյունքում Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը կայացվել է Կատարողի կողմից ներկայացված ոչ հավաստի տեղեկությունների հիման վրա, ապա այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում ՀՀ օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում Պատվիրատուն չի կարող կրել պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողած օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայամանգրի կատարմամբ Կատարողի ստացածով.

8.3 Սույն պայմանագիրը լուծելու և դադարելու հիմքերը որոշվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով: Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել սույն պայմանագրով սահմանված պայմաններով, ինչպես նաև կողմերից յուրաքանչյուրի կողմից` այդ մասին մյուս կողմին մեկ ամիս առաջ գրավոր նախազգուշացնելու պայմանով:

8.4 Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության այլ նորմատիվ իրավական ակտերով:

8.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.6 Սույն պայմանագիրը, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8.7 Սույն պայմանագրով կատարված բոլոր գրավոր ծանուցումներն ընդունելի են Կողմերի կողմից, եթե դրանք կատարվել են սույն պայմանագրի Գլուխ 9-ով սահմանված իրավաբանական հասցեներով` փոստային ծանուցման կամ առձեռն հանձնման միջոցով, կամ էլեկտրոնային եղանակով` հետևյալ էլեկտրոնային փոստի հասցեներով`

Գործակալ` gnumner@haypost.am

Պրինցիպալ`

8.8 Սույն պայմանագրի 9-րդ գլխում նշված վավերապայմաններում և սույն պայմանագրի կնքման համար միմյանց ներկայացրած փաստաթղթերում փոփոխություններ կատարվելու դեպքերում Կողմերը ծանուցում են միմյանց այդ մասին համապատասխան փոփոխությունը կատարվելուց հետո եռօրյա ժամկետում կամ անհապաղ, եթե փոփոխությունը վերաբերում է բանկային վավերապայմաններին և էլեկտրոնային փոստի հասցեին:

**Գլուխ 12. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

«Մատակարար»

«Գնորդ»

«Հայփոստ» ՓԲԸ

ք. Երևան, Սարյան 22

ՀՀ 1930003703150100

«Կոնվերսբանկ» ՓԲԸ

ՀՎՀՀ 02507464

Գլխավոր գործադիր տնօրեն`

---------------------------- Հ. Կարապետյան

Հավելված 1

«01» 03 2021թ.

կնքված թիվ        պայմանագրի

# Փոստային բաժանմունքներում իրականցվող մաքրման աշխատանքների քանակը և տեխնիկական բնութագիրը

| Ծառայության անվանումը | Չ/Մ | Քանակ | Միավորի գին | Ընդանուր գին |
|---|---|---|---|---|
| Կազմակեպության ընտրություն ,որը կապահովի մարզային թվով **169 Փ/Բ-ի** ամենօրյա, շաբաթական, ամսեկան և սեզոնային մաքրությունը | ք/մ | **18,738.00** | | |
| Կազմակեպության ընտրություն ,որը կապահովի Երևան քաղաքի թվով **69 Փ/Բ-ի** ամենօրյա, շաբաթական, ամսեկան և սեզոնային մաքրությունը | ք/մ | **7,564.72** | | |

1. **Ամենօրյա մաքրության աշխատանքների նկարագիր՝**

1.1. Փոստային բաժանմունքի ընդհանուր տարածքի մաքրում ավելով կամ խոզանակով:

1.2. Ավելով մաքրելուց հետո՝ հատակի մաքրումը պետք է իրականացնել խոնավ լաթով՝ միկրոֆիբրա կամ համարժեք արտադրության կտորով:

1.3. Ապակիների, բռնակների, պատերի, վարդակների, դռների վրայից մատնահետքերի և կեղտաբծերի հեռացում միկրոֆիբրայով ՝ Քլին կամ համարժեք արտադրության նյութով (որակյալ հակալերգիկ անհոտ նյութով): Համարժեքությունը որոշում է պատվիրատուն, առաջին իսկ պահանջի դեպքում՝նյութերը պետք է փոխել:

1.4. Մուտքի դռան և ապակիների մաքրում միկրոֆիբրայով, Քլին կամ համարժեք արտադրության նյութով՝ որակյալ հակալերգիկ անհոտ նյութով: Համարժեքությունը որոշում է պատվիրատուն առաջին իսկ պահանջի դեպքում նյութերը պետք է փոխել:

1.5. Նախամուտքի մաքրում միկրոֆիբրայով, Քլին կամ համարժեք արտադրության նյութով՝ որակյալ հակալերգիկ անհոտ նյութով: Համարժեքությունը որոշում է պատվիրատուն առաջին իսկ պահանջի դեպքում նյութերը պետք է փոխել:

1.6. Հատակի մաքրման նյութերը, կտորները, մաքրող միջոցները պետք լինեն տարբեր: Արգելվում է նույն կտորով մաքրել միաժամանակ և հատակը և սեղանը:

1.7. Սանհանգույցի նյութերով արգելվում է մաքրել սրահի սեղաններն ու հատակը:

1.8. Փոստային բաժանմունքների բոլոր գրասենյակային սեղանների, պահարանների, տեխնիկական սարքավորումների մաքրում հատուկ, կահույքին չվնասող համապատասխան գործարանային նյութով:

1.9. Համակարգիչների, պատճենահանման սարքերի, տպիչների, ֆաքսերի մաքրում` սարքավորումները հատուկ գործարանային արտադրության նյութով :

1.10. Սանհանգույցների մանրակրկիտ մաքրում՝ հատուկ ախտահանիչ միջոցներով՝ քլոր պարունակող նյութով:

1.11. Աղբամանների մաքրում և աղբի հեռացում:

1.12. Հայելիների մաքրում միկրոֆիբրայով, քլին կամ համարժեք արտադրության նյութով՝ որակյալ հակալերգիկ անհոտ նյութով: Համարժեքությունը որոշում է պատվիրատուն առաջին իսկ պահանջի դեպքում նյութերը պետք է փոխել:

**2. Շաբաթական, ամսական և սեզոնային մաքրության աշխատանքների նկարագիր՝**

2.1. Փոստային բաժանմունքի տարածքում տեղադրված օդափոխիչների զտիչների և պլաստմասե ծածկույթների մաքրում:

2.2. Սանհանգույցների սալիկների ախտահանում հատուկ ախտահանիչ միջոցներով՝ քլոր պարունակող նյութով:

2.3. Փոստային բաժանմունքներին պատկանող հարակից տարածքների մաքրում:

2.4. Համապասխան սարքավորումներով ուղղահայաց մակերեսների մաքրում՝ պատեր, պահարաններ, դռների վերնամասեր, լույսեր, տեղեկատվական վահանակներ, ապահովելով նաև աստիճանաասանդուղքների մաքրությունը:

2.5. Աթոռների փոշեզերծում հատուկ փափուկ կահույքի համար նախատեսված փոշեծծիչով:

2.6. Դրսի ապակիների մաքրում:

2.7. Օդորակիչների զտիչների մաքրում միկրոֆիբրայով, Քլին կամ համարժեք արտադրության նյութով՝ որակյալ, հակալերգիկ, անհոտ նյութով: Համարժեքությունը որոշում է պատվիրատուն, առաջին իսկ պահանջի դեպքում նյութերը պետք է փոխել:

2.8. Փ/Բ պատկանող տարածքից ձյան ծածկույթների հեռացում յուրաքանչյուր օր:

2.9. Տերևաթափի հետևանքով առաջացած ծածկույթների մաքրում յուրաքանչյուր օր:

**Մարզային թվով 169 և Երևանի թվով 69 վերանորոգված փոստային բաժանմունքների մաքրվող օբյեկտների ցանկն ու մակերեսները**

| Մարզեր և Երևան | Փոստային բաժանմունք | Փոստային բաժանմունքի հասցեն | Ինդեքս | Ընդհանուր մակերես |
|---|---|---|---|---|
| Երևան | Երևան | Նալբանդյան 21 | 0001 | 73,00 |
| Երևան | Երևան | Հ/Ա զանգվ. Բ-2 թ. 138 | 0004 | 60,60 |
| Երևան | Երևան | Արցախի 4 | 0005 | 129,50 |
| Երևան | Երևան | Գ. Նժդեհի 7 | 0006 | 75,30 |
| Երևան | Երևան | Սասունցի Դավթի 6 | 0008 | 58,00 |
| Երևան | Երևան | Կորյունի 25, բն. 14 | 0009 | 60,00 |
| Երևան | Երևան | Նալբանդյան 28 | 0010 | 318,00 |
| Երևան | Երևան | Հին Նորք 74 | 0011 | 85,30 |
| Երևան | Երևան | Կոմիտասի 19 | 0012 | 109,20 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Երևան | Երևան | Շիրվանզադե 2 | 0014 | 138,60 |
| Երևան | Երևան | Գ. Լուսավորչի 12 | 0015 | 59,80 |
| Երևան | Երևան | Սարի թաղ 7փ. 86 | 0017 | 130,90 |
| Երևան | Երևան | Տիգրան Մեծի 36 | 0018 | 183,60 |
| Երևան | Երևան | Մ. Բաղրամյան 23 | 0019 | 95,60 |
| Երևան | Երևան | Էրեբունի 31 | 0020 | 99,60 |
| Երևան | Երևան | Արշակունյաց 16ա | 0023 | 123,00 |
| Երևան | Երևան | Չարենցի 1բ | 0025 | 106,40 |
| Երևան | Երևան | Գ.Նժդեհի 31/36 | 0026 | 107,40 |
| Երևան | Երևան | Կիևյան 4 | 0028 | 157,10 |
| Երևան | Երևան | Լենինգրադյան 52 | 0031 | 194,00 |
| Երևան | Երևան | Սեբաստիա 78 | 0032 | 74,80 |
| Երևան | Երևան | Միամանթո 1 | 0033 | 124,00 |
| Երևան | Երևան | Հ. Սվաճյան 32 | 0034 | 140,00 |
| Երևան | Երևան | Լեփսիուսի 8 | 0035 | 83,00 |
| Երևան | Երևան | Ալիխանյան Եղբայրների 7 | 0036 | 44,00 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Երևան | Երևան | Ազատության 2 | 0037 | 69,80 |
| Երևան | Երևան | Շինարարների 10 | 0038 | 102,50 |
| Երևան | Երևան | Բագրատունյաց 7 | 0039 | 104,30 |
| Երևան | Երևան | Էրեբունի 3 | 0041 | 90,10 |
| Երևան | Երևան | Բագրատունյաց 22/2 | 0046 | 106,60 |
| Երևան | Երևան | Հ. Բեկնազարյան 11 | 0048 | 86,60 |
| Երևան | Երևան | Չեխովի 6 | 0050 | 150,50 |
| Երևան | Երևան | Կոմիտասի 41 | 0051 | 147,50 |
| Երևան | Երևան | Զ. Սարկավագի 77 | 0052 | 82,00 |
| Երևան | Երևան | Տ.Պետրոսյան 17/6 | 0054 | 100,00 |
| Երևան | Երևան | Դավիթաշեն 2 փ., տուն 40/3 | 0154 | 16,00 |
| Երևան | Երևան | Եղիշե Թադևոսյան 14 | 0055 | 58,70 |
| Երևան | Երևան | Նոր Նորք 1-ին զ., Նանսենի 10 | 0056 | 138,20 |
| Երևան | Երևան | Հ/Ա զանգվ. Գ-3 թ. 22 | 0057 | 134,30 |
| Երևան | Երևան | Դավթաշեն, 1-ին թաղամաս, 48 շենք, 76 տարածք | 0058 | 77,72 |
| Երևան | Երևան | Նոր Նորք 9-րդ զ., Վիլնյուսի 6 | 0059 | 118,50 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Երևան | Երևան | Իսահակյան թաղ. 7 | 0060 | 73,30 |
| Երևան | Երևան | Արշակունյաց 54 | 0061 | 148,50 |
| Երևան | Երևան | Նոր Նորք 2-րդ զ., Թոթովենցի 3 | 0062 | 141,20 |
| Երևան | Երևան | Մ. Խուդյակովի 38 | 0063 | 51,20 |
| Երևան | Երևան | Րաֆֆու 83 | 0064 | 122,00 |
| Երևան | Երևան | Սեբաստիայի 27 | 0065 | 74,20 |
| Երևան | Երևան | Կուրղինյան 7 | 0068 | 117,50 |
| Երևան | Երևան | Դրոյի 15 | 0069 | 125,50 |
| Երևան | Երևան | Երվանդ ՔՈչարի 1 | 0070 | 55,00 |
| Երևան | Երևան | Նորագավիթ գյուղ 1փ,92շ. | 0072 | 111,40 |
| Երևան | Երևան | Ն. Շենգավիթ 11փ. 39/44 | 0074 | 88,00 |
| Երևան | Երևան | Աթոյան անց. 13 | 0075 | 147,00 |
| Երևան | Երևան | Նոր Նորք 4-րդ զ., Բակունցի 4 | 0076 | 189,00 |
| Երևան | Երևան | Մարգարյան 16 | 0078 | 109,60 |
| Երևան | Երևան | Արտեմ Միկոյանի 17 | 0079 | 186,90 |
| Երևան | Երևան | Ա. Իսակովի 4/1 | 0082 | 105,60 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Երևան | Երևան | Օգանովի 3 | 0084 | 88,60 |
| Երևան | Երևան | Աէրացիա, Շիրակի 5-րդ նրբ., 7շ. | 0085 | 116,40 |
| Երևան | Երևան | Շիրակի 56 | 0086 | 150,00 |
| Երևան | Երևան | Ավանեսովի 8/3 | 0087 | 54,00 |
| Երևան | Երևան | Շիրազի 32 | 0088 | 116,20 |
| Երևան | Երևան | Ա. ՔՈչինյան 4 | 0089 | 98,80 |
| Երևան | Երևան | Ա. Միկոյան 1 | 0090 | 126,00 |
| Երևան | Երևան | Զ. Սարկավագի 123 | 0091 | 162,60 |
| Երևան | Երևան | Կարախանյան 33 | 0092 | 86,00 |
| Երևան | Երևան | Դ. Մալյան 2 | 0096 | 115,20 |
| Երևան | Երևան | Մաշտոցի 16թ., 21 | 0097 | 82,00 |
| Երևան | Երևան | Շինարարների 15 | 0099 | 109,00 |
| | | | | **7 564,72** |
| Արագածոտն | Աշտարակ | ք.Աշտարակ, Միսակյան 1 | 0201 | 217,50 |
| Արագածոտն | Աշտարակ | Սպանդարյան 20 | 0204 | 84,40 |
| Արագածոտն | Բյուրական | գ.Բյուրական | 0213 | 86,00 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Արագածոտն | Կարբի | գ.Կարբի | 0214 | 88,50 |
| Արագածոտն | Կոշ | գ.Կոշ | 0215 | 57,60 |
| Արագածոտն | Ոսկեվազ | գ.Ոսկեվազ | 0220 | 102,00 |
| Արագածոտն | Փարպի | գ.Փարպի | 0224 | 93,20 |
| Արագածոտն | Օշական | գ.Օշական | 0226 | 56,00 |
| Արագածոտն | Քուչակ | գ.Քուչակ | 0311 | 71,20 |
| Արագածոտն | Թալին | ք.Թալին, Սպանդարյան 7 | 0501 | 94,20 |
| Արագածոտն | Արագածավան | գ.Արագածավան | 0503 | 113,10 |
| Արագածոտն | Արտենի | գ.Արտենի | 0505 | 85,70 |
| Արագածոտն | Մաստարա | գ.Մաստարա | 0511 | 103,80 |
| Արարատ | Արտաշատ | ք.Արտաշատ,Մարքսի 1 փ. | 0701 | 323,00 |
| Արարատ | Արևշատ | գ.Արևշատ | 0712 | 82,10 |
| Արարատ | Մխչյան | գ.Մխչյան | 0725 | 109,50 |
| Արարատ | Վեդի | ք.Վեդի, Արարատյան 59 | 0601 | 159,90 |
| Արարատ | Արարատ | ք.Արարատ, Շահումյան 32 | 0602 | 137,50 |
| Արարատ | Այգավան | գ.Այգավան | 0604 | 103,10 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Արարատ | Արարատ | գ.Արարատ | 0607 | 92,00 |
| Արարատ | Ոսկետափ | գ.Ոսկետափ | 0617 | 104,80 |
| Արարատ | Փոքր Վեդի | գ.Փոքր Վեդի | 0623 | 91,50 |
| Արարատ | Արմաշ | գ.Արմաշ | 0624 | 94,00 |
| Արարատ | Տափերական | գ.Տափերական | 0628 | 88,50 |
| Արարատ | Մասիս | ք.Մասիս, Հանր.2 | 0801 | 187,50 |
| Արարատ | Այնթափ | գ.Այնթափ | 0803 | 86,00 |
| Արարատ | Գեղանիստ | գ.Գեղանիստ | 0806 | 82,50 |
| Արարատ | Դարակերտ | գ.Դարակերտ | 0808 | 54,30 |
| Արարատ | Հայանիստ | գ.Հայանիստ | 0812 | 49,00 |
| Արարատ | Հովտաշատ | գ.Հովտաշատ | 0813 | 33,00 |
| Արարատ | Նոր Խարբերդ | գ.Նոր Խարբերդ | 0817 | 107,00 |
| Արարատ | Նորաբաց | գ.Նորաբաց | 0818 | 12,00 |
| Արմավիր | Վաղարշապատ | ք.Էջմիածին,Մաշտոցի 2 | 1101 | 383,00 |
| Արմավիր | Վաղարշապատ | Չարենցի 5 | 1102 | 71,10 |
| Արմավիր | Վաղարշապատ | Վ.Մամիկոնյան 0 | 1103 | 78,60 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Արմավիր | Վաղարշապատ | գ. Ջվարթնոց | 1109 | 132,40 |
| Արմավիր | Աղավնատուն | գ.Աղավնատուն | 1113 | 91,90 |
| Արմավիր | Արշալույս | գ.Արշալույս | 1122 | 85,80 |
| Արմավիր | Բաղրամյան | գ.Բաղրամյան | 1123 | 98,90 |
| Արմավիր | Գայ | գ.Գայ | 1124 | 99,80 |
| Արմավիր | Մերձավան | գ.Մերձավան | 1139 | 53,30 |
| Արմավիր | Փարաքար | գ.Փարաքար | 1149 | 101,40 |
| Արմավիր | Արմավիր 01 | Հանրապետության 30 | 0901 | 395,00 |
| Արմավիր | Արմավիր 06 | Բաղրամյան 27 | 0906 | 79,50 |
| Արմավիր | Մեծամոր 01 | ք.Մեծամոր | 0910 | 159,00 |
| Արմավիր | Արևիկ | գ.Արևիկ | 0917 | 66,50 |
| Արմավիր | Արմավիր գյուղ | գ.Արմավիր | 0918 | 80,30 |
| Արմավիր | Հոկտեմբեր | գ.Հոկտեմբեր | 0930 | 89,90 |
| Արմավիր | Մրգաշատ | գ.Մրգաշատ | 0934 | 112,00 |
| Արմավիր | Նալբանդյան | գ.Նալբանդյան | 0936 | 84,30 |
| Արմավիր | Բաղրամյան | գ.Բաղրամյան,Արարատյան 20 | 1001 | 169,00 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Արմավիր | Լեռնագոգ | գ.Լեռնագոգ | 1006 | 80,10 |
| Արմավիր | Քարակերտ | գ.Քարակերտ | 1011 | 99,20 |
| Գեղարքունիք | Սևան | ք.Սևան, Նաիրյան 137 | 1501 | 553,00 |
| Գեղարքունիք | Դդմաշեն | գ.Դդմաշեն | 1508 | 86,10 |
| Գեղարքունիք | Լճաշեն | գ.Լճաշեն | 1510 | 98,00 |
| Գեղարքունիք | Ծովագյուղ | գ.Ծովագյուղ | 1512 | 102,50 |
| Գեղարքունիք | Գավառ | ք.Գավառ,Կենտրոնական 1/1 | 1201 | 183,00 |
| Գեղարքունիք | Գավառ | ք.Գավառ,Հացառատ թաղ, Բուռնազյան | 1202 | 62,00 |
| Գեղարքունիք | Կարմիրգյուղ | գ.Կարմիր գյուղ | 1211 | 81,50 |
| Գեղարքունիք | Նորատուս | գ.Նորատուս | 1213 | 96,00 |
| Գեղարքունիք | Սարուխան | գ.Սարուխան | 1214 | 114,00 |
| Գեղարքունիք | Ճամբարակ | Ճամբարակ,Սեպտեմբերի 21/4 | 1301 | 113,00 |
| Գեղարքունիք | Մարտունի | Մյասնիկյան 19 | 1401 | 157,90 |
| Գեղարքունիք | Լիճք | գ.Լիճք | 1409 | 107,30 |
| Գեղարքունիք | Վարդենիկ | գ.Վարդենիկ | 1418 | 154,00 |
| Գեղարքունիք | Վարդենիս | Երիտասարդության 1 | 1601 | 188,00 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Գեղարքունիք | Մեծ Մասրիկ | գ.Մեծ Մասրիկ | 1618 | 93,50 |
| Տավուշ | Դիլիջան | ք.Դիլիջան, Մյասնիկյան 62 | 3901 | 196,70 |
| Տավուշ | Դիլիջան | գ.Թեղուտ | 3902 | 37,80 |
| Տավուշ | Հաղարծին | գ.Հաղարծին | 3908 | 84,80 |
| Տավուշ | Իջևան | ք.Իջևան,Երևանյան 10 | 4001 | 136,00 |
| Տավուշ | Գանձաքար | գ.Գանձաքար | 4007 | 92,70 |
| Տավուշ | Նոյեմբերյան | ք.Նոյեմբերյան, Երևանյան 5 | 4101 | 151,00 |
| Տավուշ | Այրում | գ.Այրում | 4102 | 64,20 |
| Տավուշ | Բարեկամավան | գ.Բարեկամավան | 4106 | 18,00 |
| Տավուշ | Կողբ | գ.Կողբ | 4110 | 114,10 |
| Տավուշ | Բերդ | ք.Բերդ Մաշտոցի 29 | 4201 | 175,00 |
| Տավուշ | Նորաշեն | գ.Նորաշեն | 4210 | 74,00 |
| Կոտայք | Աբովյան | ք.Աբովյան, Բարեկ. հրապ 2 | 2201 | 111,30 |
| Կոտայք | Աբովյան | ք.Աբովյան,Գառնի 3 | 2202 | 57,00 |
| Կոտայք | Աբովյան | ք.Աբովյան,Սարալանջի 2/18 | 2203 | 79,30 |
| Կոտայք | Աբովյան | ք.Աբովյան,Սևանի 2/6 | 2204 | 96,90 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Կոտայք | Աբովյան | ք.Աբովյան,4-րդ մկր. շրջ. 18շ. | 2206 | 69,50 |
| Կոտայք | Առինջ | գ.Առինջ | 2210 | 60,00 |
| Կոտայք | Արամուս | գ.Արամուս | 2211 | 93,00 |
| Կոտայք | Բյուրեղավան | գ.Բյուրեղավան 5-րդ փ, 33 շ. | 2214 | 74,20 |
| Կոտայք | Գառնի | գ.Գառնի | 2215 | 86,00 |
| Կոտայք | Կամարիս | գ.Կամարիս | 2221 | 57,60 |
| Կոտայք | Կոտայք | գ.Կոտայք | 2223 | 77,00 |
| Կոտայք | Հրազդան | ք.Հրազդան, Անդրանիկի 3 | 2301 | 210,00 |
| Կոտայք | Հրազդան | ք.Հրազդան, Անդրանիկի պողոտա | 2302 | 101,80 |
| Կոտայք | Հրազդան | ք.Հրազդան,Սպանդարյան 5 շ | 2306 | 18,00 |
| Կոտայք | Ծաղկաձոր | ք.Ծաղկաձոր, Մագիստրոսի 4 | 2310 | 87,70 |
| Կոտայք | Մեղրաձոր | գ.Մեղրաձոր | 2315 | 90,00 |
| Կոտայք | Սոլակ | գ.Սոլակ | 2316 | 101,70 |
| Կոտայք | Չարենցավան | ք.Չարենցավան, Խանջյան 4 | 2501 | 216,00 |
| Կոտայք | Չարենցավան | ք.Չարենցավան, 2 Մկր. 1թաղ.13 շ | 2502 | 76,80 |
| Կոտայք | Բջնի | գ.Բջնի | 2504 | 98,20 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Կոտայք | Ալափարս | գ.Ալափարս | 2505 | 88,50 |
| Կոտայք | Եղվարդ | ք.Եղվարդ, Երևանյան փ. 2 | 2401 | 128,20 |
| Կոտայք | Զովունի | գ.Զովունի | 2406 | 88,70 |
| Կոտայք | Պռոշյան | գ.Պռոշյան | 2413 | 53,20 |
| Կոտայք | Քասախ | գ.Քասախ | 2415 | 125,20 |
| Լոռի | Սպիտակ | ք.Սպիտակ  Ս. Ավետիսյան 7/1 | 1801 | 140,00 |
| Լոռի | Ալավերդի 01 | ք.Ալավերդի Մարքսի 2 | 1701 | 186,00 |
| Լոռի | Ախթալա 01 ք. Ախթալա | ք.Ախթալա | 1709 | 72,90 |
| Լոռի | Դսեղ | գ.Դսեղ | 1718 | 76,30 |
| Լոռի | Օձուն | գ.Օձուն | 1731 | 109,20 |
| Լոռի | Ստեփանավան | ք.Ստեփանավան, Միլիոնի 3 | 1901 | 204,00 |
| Լոռի | Գյուլագարակ | գ.Գյուլագարակ | 1910 | 79,00 |
| Լոռի | Կուրթան | գ.Կուրթան | 1914 | 93,00 |
| Լոռի | Վանաձոր | ք.Վանաձոր, Տ.Մեծի  18 | 2001 | 246,00 |
| Լոռի | Վանաձոր | ք.Վանաձոր, Վարդանանց 49 | 2002 | 64,00 |
| Լոռի | Վանաձոր | ք.Վանաձոր,Սուխումի 14 | 2008 | 78,00 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Լոռի | Վանաձոր | ք.Վանաձոր,Աբովյան 53ա | 2009 | 47,50 |
| Լոռի | Վանաձոր | ք.Վանաձոր,Գ.Լուսավորիչի 6 | 2013 | 65,00 |
| Լոռի | Վանաձոր | ք.Վանաձոր,Նարեկացի 47 | 2014 | 94,50 |
| Լոռի | Վանաձոր | ք.Վանաձոր,Ներսիսյան 4 | 2015 | 75,00 |
| Լոռի | Վանաձոր | ք.Վանաձոր,Չուխաջյան 6 | 2018 | 97,40 |
| Լոռի | Վանաձոր | ք.Վանաձոր,Տարոն 2 | 2020 | 56,00 |
| Լոռի | Վանաձոր | ք.Վանաձոր,Գ.Լուսավորիչի 52 | 2021 | 50,00 |
| Լոռի | Վանաձոր | ք.Վանաձոր,Գ.Լուսավորիչի 16 | 2022 | 79,00 |
| Լոռի | Շահումյան | գ.Շահումյան | 2038 | 71,50 |
| Լոռի | Տաշիր | ք.Տաշիր, Ջահուկյան 22 | 2101 | 132,60 |
| Լոռի | Մեծավան | գ.Մեծավան | 2112 | 124,50 |
| Լոռի | Նորաշեն | գ.Նորաշեն | 2114 | 107,50 |
| Շիրակ | Գյումրի | Տիգրան Մեծի պող. 1 | 3101 | 76,00 |
| Շիրակ | Գյումրի | Ռիժկովի 5 | 3104 | 109,00 |
| Շիրակ | Գյումրի | Շիրակացու փ. ԴՌՍ 15 | 3108 | 60,70 |
| Շիրակ | Գյումրի | Անի թաղ Մ.Խորենացու 10 | 3126 | 119,90 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Շիրակ | Կամո | գ.Կամո | 2611 | 102,70 |
| Շիրակ | Ոսկեհասկ | գ.Ոսկեհասկ | 2621 | 76,50 |
| Շիրակ | Ամասիա 01 | գ.Ամասիա | 2701 | 96,20 |
| Շիրակ | Ղազանչի | գ.Ղազանչի | 2806 | 77,80 |
| Շիրակ | Անի | ք.Մարալիկ, Յաղթանակի 1 | 2901 | 136,00 |
| Շիրակ | Սառնաղբյուր | գ.Սառնաղբյուր | 2911 | 77,70 |
| Շիրակ | Արթիկ | ք.Արթիկ, Սվերդլովի 4 | 3001 | 174,70 |
| Շիրակ | Արթիկ | ք.Արթիկ,Շիրազի 1 | 3003 | 78,00 |
| Շիրակ | Հոռոմ | գ.Հոռոմ | 3015 | 94,50 |
| Շիրակ | Պեմզաշեն | գ.Պեմզաշեն | 3020 | 110,70 |
| Շիրակ | Փոքր Մանթաշ | գ.Փոքր Մանթաշ | 3027 | 61,00 |
| Վայոց Ձոր | Եղեգնաձոր 01 | ք.Եղեգնաձոր Շահումյան 3 | 3601 | 520,70 |
| Վայոց Ձոր | Աղավնաձոր | գ.Աղավնաձոր | 3603 | 67,80 |
| Վայոց Ձոր | Մալիշկա | գ.Մալիշկա | 3610 | 100,50 |
| Վայոց Ձոր | Ռինդ | գ.Ռինդ | 3613 | 80,80 |
| Վայոց Ձոր | Քարագլուխ | գ.Քարագլուխ | 3615 | 58,00 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Վայոց Ձոր | Ջերմուկ | ք.Ջերմուկ, Շահումյան 14 | 3701 | 84,10 |
| Վայոց Ձոր | Վայք /հենակետ/ | ք.Վայք, Ջերմուկի խճ. 12 | 3801 | 179,50 |
| Վայոց Ձոր | Զառիթափ | գ.Զառիթափ | 3805 | 74,60 |
| Սյունիք | Գորիս | ք.Գորիս Անկախության 19 | 3201 | 309,50 |
| Սյունիք | Խնձորեսկ | գ.Խնձորեսկ | 3207 | 82,00 |
| Սյունիք | Շինուհայր | գ.Շինուհայր | 3213 | 108,90 |
| Սյունիք | Վերիշեն | գ.Վերիշեն | 3217 | 71,00 |
| Սյունիք | Տաթև | գ.Տաթև | 3218 | 92,50 |
| Սյունիք | Տեղ | գ.Տեղ | 3219 | 123,00 |
| Սյունիք | Կապան 01 | ք.Կապան Թումանյան 1 | 3301 | 320,40 |
| Սյունիք | Կապան 02 | ք.Կապան Շահումյան 37 | 3302 | 70,00 |
| Սյունիք | Կապան 03 | ք.Կապան Մ. Պապյան 16 | 3303 | 67,80 |
| Սյունիք | Կապան 04 | ք.Կապան Ա. Մանուկյան 1 | 3303 | 39,00 |
| Սյունիք | Կապան 07 | ք.Կապան, Բաղաբերդ թաղ. 1 | 3307 | 116,60 |
| Սյունիք | Կապան 08 | ք.Կապան Ա. Մանուկյան 1-ին նրբ. | 3308 | 84,70 |
| Սյունիք | Քաջարան | ք. Քաջարան, Լեռնագործների 4 | 3309 | 118,90 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Սյունիք | Արծվանիկ | գ.Արծվանիկ | 3311 | 57,00 |
| Սյունիք | Մեղրի 01 | ք.Մեղրի Մելիք Օհանջանյան 1 | 3401 | 96,00 |
| Սյունիք | Ագարակ | ք.Ագարակ Չարենցի 7 | 3403 | 125,50 |
| Սյունիք | Սիսիան 01 | ք.Սիսիան Սիսական 39 | 3501 | 235,40 |
| Սյունիք | Սիսիան 03 | ք.Սիսիան Գայի 6 | 3503 | 54,20 |
| Սյունիք | Շաղաթ | գ.Շաղաթ | 3514 | 58,00 |
| | | | | **18 738** |

## Մաքրման աշխատանքներ

1. Գրասենյակային տարածքի մաքրում,
2. Անվտանգության և ծառայողական սենյակների մաքրում
3. Ապակիների, բռնակների, պատերի, վարդակների, դռների վրայից մատնահետքերի և կեղտաբծերի հեռացում,
4. Մուտքի դռների և ապակիների մաքրում,
5. Նախամուտքի չօգտագործվող տարածքների փոշեզերծում ,
6. Սալիկների և կոշտ մակերևույթների մաքրում խոնավ միջոցներով
7. Աստիճանավանդակների մաքրում և փոշեզերծում
8. Ուղղահայաց մակերևույթների մաքրում՝ ներառելով պահարանները, դռների վերնամասերը, լույսերը, պատին փակցված նկարները և տեղեկատվության վահանակները
9. Պինդ մակերևույթների մեխանիկական մաքրում
10. Արտաքին ապակիների մաքրում
11. Օդորակիչների զտիչների մաքրում

ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ

1. Նստատեղերի, լվացարանների, հարող մակերեսների ախտահանում

2. Հայելիների, մետաղական մակերևույթների և մյուս պարագաների մաքրում
3. Սալիկների մաքրում
4. Խոնավ ջնջոցներով հատակի մաքրում և ախտահանում
5. Դռների բռնակների ախտահանում

Հավելված 1

«**» 2018թ.
կնքված թիվ IS- **-**-18 պայմանագրի

**«Հայփոստ» ՓԲԸ**

**Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար՝**

**---------------------------- Հ. Ավագյան**

**«---------»------------------2021թ.**

# Ա Կ Տ

**Հանձնման-ընդունման**

**Ք. Երևան** « » **2021թ.**

Պայմանագրի անվանումը՝ -------------------

Մենք ներքոստորգրյալներս՝ ----------------------/ այսուհետ՝ «Հանձնող»/, մի կողմից, և «Հայփոստ» ՓԲԸ /այսուհետ՝ «Ընդունող»/, մյուս կողմից, կազմեցինք սույն ակտը հետևյալի մասին.

«կազմակերպությունը» ՍՊԸ կատարել է «Հայփոստ» ՓԲԸ-ի -------------------՝ հետևյալ աշխատանքները համաձայն կից ցուցակի:

Սույն ակտը կազմված է 2 /երկու/ օրինակից:

| **№** | **Նյութերի անվանումը** | **Չափ/մ** | **Քանակ** | **Գին** | **Գումար** |
|---|---|---|---|---|---|
| 1 | | | | | |
| 2 | | | | | |
| | | | | **Ընդամենը** | |

***Ընդունեց՝***

***Հանձնեց ՝***

**Ձև 1**
*ՀՓ- ՍԱԾՁԲ-02/21 ծածկագրով*
*մրցույթի հրավերի*

## Մ ր ց ո ւ յ թ ի ն  մ ա ս ն ա կ ց ե լ ո ւ  ա ռ ա ջ ա ր կ

____________________________________________հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու

Մրցույթի մասնակցի անվանումը (անունը)

«Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության կողմից «ՀՓ-ՍԱԾՁԲ-02/21» ծածկագրով հայտարարված մրցույթին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է մրցույթի հայտը:

____________________________________________հայտնում է նաև, որ ունի

Մրցույթի մասնակցի անվանումը (անունը)

գնման պայմանագրով և հրավերով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.

Առդիր՝____________թերթ:

_______________________________________________________________ ________________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

____________________________2021թ.

(ամսաթիվը, ամիսը)

**Ձև 2**
*«ՀՓ-ՄԱԾՁԲ-02/21»* *ծածկագրով*
մրցույթի հրավերի

## Որակավորման չափանիշներ

| Մաս N | Որակավորման չափանիշներ | **Մասնակցի կողմից ներկայացվող տեղեկություններն ու փաստաթղթերի անվանումները** |
|---|---|---|
| 1 | **Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը** | Մասնակիցը լրացնում է Հրավերի 2-րդ բաժնի 1-ին մասում պահանջվող տեղեկությունները և սույն փաստաթղթին կցում է պահանջվող փաստաթղթերը |
| 2 | **Մասնագիտական փորձառություն** | Մասնակիցը լրացնում է Հրավերի 2-րդ բաժնի 2-րդ մասում պահանջվող տեղեկությունները և սույն փաստաթղթին կցում է պահանջվող փաստաթղթերը |
| 3 | **Տեխնիկական միջոցներ** | Մասնակիցը լրացնում է Հրավերի 2-րդ բաժնի 3-րդ մասում պահանջվող տեղեկությունները և սույն փաստաթղթին կցում է պահանջվող փաստաթղթերը |
| 4 | **ֆինանսական միջոցներ.** | Մասնակիցը լրացնում է Հրավերի 2-րդ բաժնի 4-րդ մասում պահանջվող տեղեկությունները և սույն փաստաթղթին կցում է պահանջվող փաստաթղթերը<br><br>« » 2021թ.<br><br>Շահառու՝<br>«Հայփոստ» ՓԲԸ<br><br>**ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ**<br><br>Հաշվի առնելով, որ ------ ՍՊԸ-ն (իրավաբանական հասցե՝ -------, այսուհետ՝ Պրինցիպալ) ներկայացնելու է «Հայփոստ» ՓԲԸ մաքրության ծառայությունների մատակարարի ընտրությանը մասնակցելու |

| | | |
|---|---|---|
| | | վերաբերյալ իր առաջարկը (այսուհետ՝ Առաջարկ),<br>Սույնով ------- բանկը (իրավաբանական հասցե՝ -------, այսուհետ՝ Բանկ) անվերապահորեն պարտավորություն է ստանձնում «Հայփոստ» ՓԲԸ (իրավաբանական հասցե՝ -------, այսուհետ՝ Շահառու) առջև 15 000 000 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով, որի վճարումը սույնով պարտավորվում է կատարել Շահառուի օգտին ամբողջությամբ և ժամանակին։<br>Սույն պարտավորության կատարման պայմանները հետևյալն են՝<br>1. Եթե Պրինցիպալը փոխի կամ հետ կանչի իր Առաջարկը դրա գործողության ժամկետի ընթացքում առաջարկների ներկայացման ժամկետի ավարտից հետո, և/կամ<br>2. Եթե Պրինցիպալը որակազրկվի Շահառուի՝ մատակարարի ընտրության շրջանակներում կիրառվող ընդհանուր դրույթներին/պայմաններին համապատասխան, և/կամ<br>3. Եթե Պրինցիպալը Շահառուի մատակարարի ընտրության արդյունքում հաղթող ճանաչվելու դեպքում հրաժարվի պայմանագիր կնքելուց։<br>Բանկը պարտավորվում է Շահառուին վճարել վերոհիշյալ գումարը Շահառուի առաջին գրավոր պահանջը ստանալուց 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, ընդ որում առանց Շահառուի տվյալ պահանջի հիմնավորումը պահանջելու, այն պայմանով, որ իր պահանջի մեջ Շահառուն նշի, որ այդ գումարը ենթակա է վճարման նրան կապված այն բանի հետ, որ տեղի է ունեցել սույն Երաշխիքում նշված պայմաններից մեկը կամ մի քանիսը։<br>Սույն երաշխիքն անհետկանչելի է։<br>Սույն երաշխիքն ուժի մեջ է մտնում տրման պահից և գործում է մինչև --- ներառյալ։ Սույն Երաշխիքի հետ կապված ցանկացած պահանջ պետք է ստացվի Բանկի կողմից վերոհիշյալ ամսաթվից ոչ ուշ, հետևյալ հասցեով՝ ----------։ |

| | | |
|---|---|---|
| 5 | **Աշխատանքային ռեսուրսներ** | Մասնակիցը լրացնում է Հրավերի 2-րդ բաժնի 5-րդ մասում պահանջվող տեղեկությունները և սույն փաստաթղթին կցում է պահանջվող փաստաթղթերը |

Առդիր՝___________թերթ:

______________________________________________ ___________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

______________________2021թ.

(ամսաթիվը, ամիսը)

Ձև 3

*«ՀՓ- ՍԱԾՁԲ-02/21»* *ծածկագրով մրցույթի հրավերի*

## Մասնակցության հայտ

| Մաս N | Մասնակցության հայտի տեսակը | Մասնակցի կողմից ներկայացվող տեղեկություններն ու փաստաթղթերի անվանումները |
|---|---|---|
| 1 | Սնանկության, անվճարունակության կամ լուծարման գործընթացներում չգտնվելու վերաբերյալ տեղեկատվություն | Մասնակիցը ներկայացնում է Հրավերի 3-րդ բաժնի 2-րդ մասով նախատեսված հայտարարությունը, ինչպես նաև ներկայացնում է պետական գրանցման վկայականի (ներառյալ՝ բոլոր ներդիրների) կամ օտարերկրյա անձի դեպքում՝ համապատասխան այլ փաստաթղթի պատճենի իր կողմից վավերացված օրինակը: |
| 2 | Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկված չլինելու վերաբերյալ տեղեկատվություն | Մասնակիցը ներկայացնում է Հրավերի 3-րդ բաժնի 2-րդ մասով նախատեսված հայտարարությունը, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկությունները (եթե այդպիսիք պահանջվում են) |
| 3 | Գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին տեղեկատվություն | Մասնակիցը ներկայացնում է Հրավերի 3-րդ բաժնի 3-րդ մասով նախատեսված հայտարարությունը, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկությունները (եթե այդպիսիք պահանջվում են) |

Առդիր՝___________թերթ:

_______________________________________________ ___________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_______________________2021թ.

(ամսաթիվը, ամիսը)

**Ձև 4**
*<u>«ՀՓ- ՄԱԾՁԲ-02/21»</u> ծածկագրով մրցույթի հրավերի*

## Հայտի և/կամ պայմանագրի ապահովման միջոցներ

1. Հաղթող ճանաչված Մասնակիցը սույն Ձևի պահանջները ապահովելու նպատակով մինչև պայմանագրի կնքումը ներկայացնում է «Հայփոստ» ՓԲԸ համապատասխան բանկային հաշվին հայտի ապահովման միջոցները փոխանցելու կամ կանխիկ մուտքագրելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթը (վճարման հանձնարարական, դրամարկղի մուտքի օրդեր և այլն), ինչպես նաև Հրահանգի սույն մասում լրացնում է ներկայացվող փաստաթղթի վավերապայմանները:
2. Հաղթող ճանաչված Մասնակիցը սույն Ձևի պահանջները ապահովելու նպատակով մինչև պայմանագրի կնքումը դրամական ապահովման փոխարեն կարող է ներկայացնել տուժանքի համաձայնագիր:
3. Մասնակիցը սույն Ձևի պահանջներն ապահովելու նպատակով ներկայացնում է Հրավերով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը («Հայփոստ» ՓԲԸ համապատասխան բանկային հաշվին պայմանագրի ապահովման միջոցները փոխանցելու կամ կանխիկ մուտքագրելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթը, կամ տուժանքի համաձայնագիրը, վարկային գծի առկայության վերաբերյալ պայմանագիրը, կամ Հրավերի 8-րդ բաժնով սահմանված այլ փաստաթուղթը): Մասնակիցը Հրահանգի սույն մասում լրացնում է ներկայացվող փաստաթղթի վավերապայմանները:

Առդիր՝___________թերթ:

_____________________________________________ ____________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____________________2021թ.

(ամսաթիվը, ամիսը)

**Ձև 5**
*«ՀՓ- ՄԱԾՁԲ-02/21» ծածկագրով մրցույթի հրավերի*

## Գնային առաջարկ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «ՀՓ- ՄԱԾՁԲ-02/21» ծածկագրով մրցույթի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ______________________________________________________________________________-ն
Մրցույթի մասնակցի անվանումը (անունը)
առաջարկում է ներկայացված չափաբաժինների մասով պայմանագիրը կատարել համաձայն կից ներկայացված գնացուցակի:

Կից ներկայացնում ենք առաջարկվող գնի հաշվարկը հետևյալ ձևաչափով:

Առդիր՝_______________թերթ:

___________________________________________________________ _________________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը) Կ. Տ.

__________________________2021թ.

(ամսաթիվը, ամիսը)